փեսացուին իրենց աշխատաւոր ձեռքերից մէկը։ Ակներև է, որ այսպիսի դէպքում մի կողմը պահանջում է վարձատրութիւն, իսկ հակառակ կողմը դորա փոխարէն ձեռք է բերում մի նոր աշխատաւոր անդամ։

Կնոջ այդ տեսակ իրաւաբանական դրութիւնը մանաւանդ բացայայտ է դառնում ընական ամուսնութեան տիրապետութեան շրջանում։ Տնտեսական պայմանների զարգացմամբ փոփոխւում են և՛ իրաւաբանական յարաբերութիւնները։ Կինը կամաց կամաց կորցնում է իւր նշանակութիւնն իբրև իրաւանց առարկայի, և հասարակական աշխարհայեացքի մէջ աստիճանաբար ճանապարհ է հարթում այն գաղափարը, թէ կինն էլ կարող է իրաւանց անձն դառնալ և որ իսկապէս դառնում է։ Բնական ամուսնութեան շրջմամբ, նրա աւերակների վրայ բարձրանում է իրաւաբանական յարաբերութիւնների մի նոր շէնք, ուր չեն կարող տեղ ունենալ անախրոնիզմ դարձած սովորութիւնները, այլ ընդհակառակն ծնունդ են առնում ներկայ պայմաններին յատուկ անձնական իրաւունքներ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան